Hakob Ghonjeyan

Digitally signed by Hakob Ghonjeyan
Date: 2024.03.10 14:38:33 +04'00'

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԴԻՋԻՍԵՅՖ» վարկային միություն
փակ բաժնետիրական ընկերության
ժողովի կողմից

07.05.21թ. թիվ 1 որոշմամբ
29.06.21թ. թիվ 2 որոշմամբ
14.06.22թ. թիվ 1 որոշմամբ
18.10.22թ. թիվ 1 և 25.11.22թ.
թիվ 1 որոշումներով
24.05.23թ. թիվ 1 որոշմամբ
28.08.23թ. թիվ 1 որոշմամբ
15.02.24թ. թիվ 1 որոշմամբ

Խորհրդի նախագահ՝

Հրաչյա Թոխմախյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Մարտին Գալստյան

Digitally signed by Martin Galstyan
Date: 2024.04.05 16:24:51 AMT
Reason: Գրանցած է 03.04.2024թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

«ԴԻՋԻՍԵՅՖ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2024

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԴԻԶԻՍԵՅՖ» վարկային միություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ստեղծվել է 2021թ-ի մայիսի 5-ին հիմնադիրների ժողովի որոշմամբ:

1.2. Կազմակերպությունը համարվում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն Կանոնադրությամբ սահմանված քանակությամբ բաժնետոմսերի:

1.3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ,Վարկային կազմակերությունների մասինե և ,Բաժնետիրական ընկերությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքներքով Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ:

1.4. Կազմակերպության հիմնադիր փաստաթուղթը սույն Կանոնադրությունն է, որի պահանջների կատարումը պարտադիր է Կազմակերպության Հիմնադիրների (բաժնետերերի), Խորհրդի, գործադիր մարմնի, կառուցվածքային ու տարածքային բոլոր ստորաբաժանումների ղեկավարների և բոլոր աշխատակիցների համար:

1.5. Կազմակերպության իրավունակությունը ծագում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցվելու պահից, իսկ դադարում՝ լուծարման վերաբերյալ պետական գրանցամատյանում գրառման պահից:

1.6. Կազմակերպությունը՝ որպես իրավաբանական անձ, օժտված է օրենսդրությամբ իրավաբանական անձին տրված բոլոր իրավասություններով:

1.7. Կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքը պատկանում է Կազմակերպությանը՝ սեփականության իրավունքով:

1.8. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.9. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների և բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

1.10. Կազմակերպության հիմնադիրները և բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և իրենց ներդրված կապիտալի սահմաններում կրում են Կազմակերպության գործունեության հետ կապված վնասի ռիսկը:

1.11. Կառավարությունը, պետական կառավարման մարմինները, Կենտրոնական բանկը պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար, եթե վերջիններս դրանք չեն ստանձնել որպես երրորդ անձ, կամ չեն երաշխավորել դրանց կատարումը որպես երաշխավոր:

1.12. Կազմակերպությունը երաշխավորում է իր հաճախորդների առևտրային և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների, փոխառությունների և գործառնությունների գաղտնիության և ամբողջականության պահպանումը՝ օրենքով սահմանված կարգով:

1.13. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս Կազմակերպության օրինական տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող Կազմակերպության գործընկերների դրամական միջոցների և այլ գույքի վրա կարող է կալանք դրվել, առգրավում կամ բռնագանձում տարածվել օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ իրավասու պետական մարմինների կողմից: Նման դեպքերում Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում օրենսդրությամբ նախատեսված

կարգով կալանքի, առգրավման կամ բռնագանձման հետևանքով իր գործընկերների կամ կոնտրագենտների կրած վնասների համար:
1.14. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ առանձնացված գույք, օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և խորհրդանիշ, իր անվամբ, խորհրդանիշով, հարկային ծածկագրով և ՀՀ կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ, ձևաթղթեր և համարային կնիքներ՝ Կազմակերպության տարածքային ստորաբաժանումների համար, ինչպես նաև անհատականացման այլ միջոցներ:
1.15. Կազմակերպությունը կրում է օրենսդրությամբ Կազմակերպությանը վերապահված իրավունքներ և պարտականություններ, անկախ դրանք սույն Կանոնադրությամբ նախատեսված լինելու կամ չլինելու փաստից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով այլ բան է սահմանված:
1.16. Կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «ԴԻՋԻՍԵՅՖ» վարկային միություն փակ բաժնետիրական ընկերություն,
անգլերեն՝ «DIGISAFE» Credit Union Closed Joint-Stock Company,
ռուսերեն՝ «ДИДЖИСЕЙФ» Кредитный Союз Закрытое Акционерное Общество,
1.17. Կազմակերպության կրճատ անվանումն է՝
հայերեն՝ «ԴԻՋԻՍԵՅՖ» ՎՄ ՓԲԸ,
անգլերեն՝ «DIGISAFE» CU CJSC,
ռուսերեն՝ «ДИДЖИСЕЙФ» КС ЗАО:
1.18. Կազմակերպության գտնվելու վայրն է (հասցեն)՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Էրեբունի 17/1, 2-25 տարածք:
1.19. Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարաններում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
1.20. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:
1.21. Կազմակերպությունն իրավունք ունի՝
ա) ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը, այլ օգտակար արդյունքը,
բ) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական միջոցները, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր,
գ) օտարել, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,
դ) տարեկան ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո շահույթի մի մասը փոխանցել կանոնադրական կապիտալ՝ տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնելով կանոնադրական կապիտալը,
ե) օրենսդրությամբ սահմանված կարգով վճարովի ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին ու քաղաքացիներին, օգտվել նրանց աշխատանքներից և ծառայություններից,
զ) այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ,
է) պահպանելով գործող օրենսդրության պահանջները՝ ստեղծել իրավաբանական անձինք կամ անդամակցել իրավաբանական անձանց միություններին,
ը) օգտվել օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:
1.22. Կազմակերպությունը պարտավոր է՝

ա) օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում, հաշվետվություններ ներկայացնել Կենտրոնական բանկ և Հայաստանի Հանրապետության լիազորված պետական մարմիններ, հրապարակել ֆինանսական հաշվետվությունները.
բ) աշխատանքային պայմանագրեր (համաձայնագրեր) կնքել Կազմակերպության աշխատակիցների հետ.
գ) պատասխանատվություն կրել և հատուցել իր կողմից պատճառված վնասը՝ պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու, այլ անձանց իրավունքները խախտելու համար.
դ) ապահովել Կազմակերպության փաստաթղթերի (կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, ներքին իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը.
ե) կրել օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:
1.23. Կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք, օրենքին համապատասխան, չեն կարող պատկանել Կազմակերպությանը:
1.24. Կազմակերպությունն ինքնուրույն է իրականացնում իր հիմնական միջոցների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը:
1.25. Կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, այդ իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Կազմակերպությանը սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:
1.26. Սույն Կանոնադրությունում կատարված փոփոխությունները երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում դրանք Կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

2.1. Կազմակերպությունը իրավունք ունի ,Վարկային կազմակերպությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:
2.2. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները գործում են Կազմակերպության կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:
2.3. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են Կազմակերպության կողմից և գործում են վերջինիս կողմից տրված լիազորագրերի հիման վրա:
2.4. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները գործում են Կազմակերպության անունից:
2.5. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների գործունեության համար պատասխանատվություն է կրում Կազմակերպությունը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

3.1.Կազմակերպության ստեղծման նպատակն է վարկային կազմակերպության

գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

3.2.Կազմակերպությունն իրավունք ունի իրականացնելու վարկային միությանը բնորոշ ֆինանսական գործառնություններ՝ Կենտրոնական բանկի կողմից վարկային միության լիցենզիա ստանալու օրվանից:

3.3.Կազմակերպությունը վարկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով վարկային միություններին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները:

3.4.Կազմակերպությունը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է վարկային կազմակերպության գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

3.5.Կազմակերպությունը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն:

3.6.Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում ներգրավվող փոխառությունների, տրամադրվող վարկերի ու փոխառությունների, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների միջնորդավճարների չափերը՝ հաշվի առնելով օրենսդրության պահանջները:

3.7.Կազմակերպության և հաճախորդների փոխհարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ և կարգավորվում են օրենքով ու կողմերի միջև կնքված պայմանագրով:

3.8.Կազմակերպությունը ՀՀ օրենսդրության շրջանակներում կարող է՝

ա) իրավաբանական անձանցից, իրենց մասնակիցներից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ, այդ թվում՝ հրապարակային օֆերտաների միջոցով:

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ.

գ) տրամադրել երաշխիքներ.

դ) անկանխիկ ձևով իր մասնակիցներից գնել և/կամ իր մասնակիցներին վաճառել արտարժույթ, այդ թվում՝ անկանխիկ ձևով իր մասնակիցների հետ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ և նման այլ գործարքներ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կանոններով.

ե) իրենց մասնակիցներից, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

զ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն.

է) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ.

ը) իրականացնել պարտքերի հետստացման գործունեություն,

թ) իր անունից թողարկել և տեղաբաշխել առանց ապահովման պարտատոմսեր՝ վարկային միության կանոնադրական հիմնադրամը չգերազանցող գումարի չափով, կամ երրորդ անձանց կողմից տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կանոններով.

ի) իրականացնել ապահովագրական գործակալի գործունեություն՝ ,Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3.9. Կազմակերպությունը կարող է տրամադրել ինչպես ձեռնարկատիրական, այնպես էլ սպառողական և հիփոթեքային վարկեր կամ փոխառություններ:

3.10.Կազմակերպությունը ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

3.11.Կազմակերպությունը չի իրականացնելու արտարժույթի կանխիկ առքուվաճառք: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ արտարժույթի առքուվաճառքն իրականացվել է Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի մարումը սպասարկելու համար և մարման համար անհրաժեշտ չափով: Ընդ որում, արտարժույթի առքուվաճառքի կանխիկ գործարքներ իրականացնելիս գործարքի արժեքը կարող է կլորացվել 5000 ՀՀ դրամի շրջանակներում:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՖՈՆԴԵՐԸ

4.1. Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 380,000,000 (երեք հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամ:

4.2. Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմված է 38,000 (երեսուն ութ հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերից, յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը՝ 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ:

4.3. Կազմակերպության կանոնադրական կապիտալը ստեղծման պահին պետք է լինի ամբողջությամբ վճարված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում բացված կուտակային հաշվին:

4.4. Կազմակերպությունը կարող է փոփոխել կանոնադրական կապիտալը և իր բաժնետերերի քանակը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

4.5. Կազմակերպությունը կարող է ավելացնել իր կանոնադրական կապիտալի չափը՝ բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով:

4.6. Կանոնադրական կապիտալում ներդրումները կարող են կատարել բացառապես Հայաստանի Հանրապետության դրամով:

4.7. Կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն դրա ամբողջությամբ վճարումից հետո:

4.8. Կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում բաժնետերերը պարտավոր են կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշմամբ սահմանված կարգով և չափերով կատարել լրացուցիչ ներդրումներ:

4.9. Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Կազմակերպության կանոնադրական կապիտալում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առ ոչինչ է:

4.10.Կազմակերպությունը ստեղծում է պահուստային ֆոնդ (գլխավոր պահուստ)՝ կանոնադրական կապիտալի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, որը ձևավորվում է Կազմակերպության զուտ շահույթի հաշվին:

4.11.Պահուստային ֆոնդը ձևավորվում է Կազմակերպության շահույթից տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև սահմանված չափին հասնելը: Պահուստային ֆոնդին կատարվող մասհանումների չափը սահմանվում է տարեկան զուտ շահույթի 5 (հինգ) տոկոսը:

4.12. Կազմակերպության Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ ֆոնդեր: Նշված ֆոնդերի ձևավորման, օգտագործման, նշված ֆոնդերից հատկացումների կարգը և չափերը սահմանվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

5.1.Կազմակերպության Հիմնադիրների (բաժնետերերի) ցուցակը՝ համապատասխան փայաբաժիններով ներկայացվում է սույն Կանոնադրության անբաժան մասը կազմող Հավելված 1-ում:

5.2.Կազմակերպության մեկ հասարակ (սովորական) բաժնետոմսը դրա սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք:

5.3.Յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

5.4.Կազմակերպության Հիմնադիրը (բաժնետերը) պարտավոր է՝

ա) ներդրումներ կատարել Կազմակերպության կանոնադրական կապիտալում սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով.

բ) չհրապարակել Կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

գ) ենթարկվել օրենքի, այլ իրավական ակտերի և սույն Կանոնադրության պահանջներին:

5.5.Կազմակերպության հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը իրավունք ունի՝

ա) մասնակցել Ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել Կազմակերպության կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Կազմակերպության գործունեությունից առաջացած շահույթից.

դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Կազմակերպության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով և Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

ե) ստանալ Կազմակերպության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով, ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Կազմակերպության արտադրատնտեսական գործունեությանը.

զ) Ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

է) հանդես գալ առաջարկություններով Ընդհանուր ժողովներում.

ը) Ընդհանուր ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

թ) դիմել դատարան՝ Ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու

այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Կազմակերպության լուծարման դեպքում ստանալ Կազմակերպության գույքի իր հասանելիք մասը.

ժա) ունենալ Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

5.6.Կազմակերպության բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի նկատմամբ գրավի իրավունքը ծագում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրավի իրավունքի գրանցման պահից:

5.7.Կազմակերպության կանոնադրական կապիտալում բաժնետիրոջը պատկանող բաժնտոմսերի (դրանց մի մասի) գրավի վրա բռնագանձում տարածվում է օրենքով սահմանված կարգով:

5.8.Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր:

5.9.Փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում շահութաբաժինը կսահմանվի որպես հաստատուն տոկոսադրույքով շահութաբաժնի և կազմակերպության շահույթի հետ կապված փոփոխական շահութաբաժնի հանրագումար:

5.10. Մինչ փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումը, կազմակերպության ընդհանուր ժողովը՝ բաժնետերերի ընդհանուր ձայների թվի առնվազն 3/4–ի կողմ քվեարկությամբ, առանձին որոշմամբ կսահմանի

ա) փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի հաստատուն տոկոսադրույքի չափը որպես տոկոս այդ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամաբ, հիմք ընդունելով այդ պահին շուկայում գործող դրամային ավանդների տոկոսադրույքները

բ) փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի փոփոխական տոկոսադրույքի չափը որպես տոկոս այդ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամաբ, հաշվի առնելով այդ պահին կազմակերպության շուկայում զբաղեցրած դիրքերը, ֆինանսական կարիքները, սպասվելիք ֆինանսական արդյունքի ցուցանիշները:

գ) փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը (որը վճարվում է Ընկերության լուծարման ժամանակ) որպես տոկոս այդ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամաբ, հաշվի առնելով այդ պահին կազմակերպության շուկայում զբաղեցրած դիրքերը, զարգացման հեռանկարները և շուկայում առկա ռիսկերը:

5.11. Փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք ժողովում:

5.12. Փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերն իրենց սեփականատեր բաժնետերերին տրամադրում են միևնույն իրավունքները:

5.13. Փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ժողովում ունեն ձայնի իրավունք, եթե քննարկվում են Ընկերության վերակազմակերպման կամ լուծարման հարցեր:

5.14. Փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը, իրավունք ունեն ձայնի իրավունքով մասնակցել այն ժողովում բոլոր հարցերի քննարկմանը, որը հետևում է տարեկան այն ժողովին, որում չի ընդունվել

որոշում՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարելու մասին, կամ ընդունվել է որոշում՝ դրանք չվճարելու կամ ոչ լրիվ վճարելու մասին: Այդ իրավունքը դադարում է արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ ծավալով շահութաբաժինների առաջին վճարումից հետո:

5.15. Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

5.16. Փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը կրում են ,Բաժնետիրական Ընկերությունների մասինե օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պարտականությունները:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

6.1. Տարեկան գործունեության արդյունքում Կազմակերպության ստացած շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Զուտ շահույթի բաշխումն իրականացվում է սույն Կանոնադրությամբ սահմանված ֆոնդերի համալրման, կանոնադրական կապիտալի ավելացման, Կազմակերպության բաժնետերերին շահույթի բաշխման (շահութաբաժինների վճարման) նպատակով կամ կարող է հաշվառվել որպես նախորդ տարիների չբաշխված շահույթ:

6.3. Տարեկան շահութաբաժինների վճարման, դրանց չափի և վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը:

6.4. Ընդհանուր ժողովը իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու մասին:

6.5. Շահութաբաժինների վճարումն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին Կազմակերպության կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին Կազմակերպությունում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին, ինչպես նաև օրենքով արգելված այլ դեպքերում:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

7.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝

ա) Ընդհանուր ժողովը,

բ) Խորհուրդը,

գ) Գործադիր մարմինը:

7.2. Ընդհանուր ժողովը

7.2.1. Ընդհանուր ժողովը Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է:

7.2.2. Տարեկան ժողովը գումարվում է ոչ ուշ, քան ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

7.2.3. Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

7.2.4. Ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը, վարման

կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են Ընդհանուր ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:

7.2.5. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Կազմակերպության վերակազմակերպումը.

գ) Կազմակերպության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Կազմակերպության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Կազմակերպության գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժ) Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժա) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

ժգ) Կազմակերպության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Կազմակերպության այլ արժեթղթերի Կազմակերպության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժդ) Ընդհանուր ժողովի վարման կարգը.

ժե) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժզ) Կազմակերպության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը.

ժէ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

ժթ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.

ի) Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

իա) Կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի, անդամների և գործադիր տնօրենի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

իբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

իգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.

իդ) հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը.

իե) հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը.

իզ) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

7.2.6. Կանոնադրության 7.2.5 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Կազմակերպության գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ այլ անձի:

7.2.7. Ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Կազմակերպության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Կազմակերպության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

7.2.8. Անկախ ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների քանակից՝ ժողովի որոշումները ընդունվում են եթե կողմ են քվեարկել ընկերության բոլոր բաժնետերերի ընդհանուր ձայների թվի առնվազն կեսից ավելին, բացառությամբ 7.2.5 կետի ա), բ), գ), դ), ե), զ), է), ը), թ), ժբ) և իա) կետերի որի վերաբերյալ որոշումները ընդունվում են եթե կողմ են քվեարկել ընկերության բոլոր բաժնետերերի ընդհանուր ձայների թվի առնվազն 3/4–ը, եթե օրենքով ավելի մեծ չափ նախատեսված չէ: Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

7.2.9. Ընդհանուր ժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն երկու օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

7.3. Խորհուրդը

7.3.1. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը:

7.3.2. Խորհուրդը բաղկացած է 3 անդամից: Խորհրդի անդամ կարող է լինել նաև Կազմակերպության բաժնետեր չհանդիսացող անձը:

7.3.3. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

գ) Ընդհանուր ժողովների օրակարգի հաստատումը.

դ) Ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը

կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը.

ե) Կանոնադրության 7.2.5 կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ընդհանուր ժողովների քննարկմանը.

զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

է) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

ը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում Կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

թ) Կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների սահմանումը.

ժ) Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժա) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժբ) Կազմակերպության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժգ) Կազմակերպության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժդ) Կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժզ) Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժե) Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

ժէ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ժը) Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.

ժթ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

ի) Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

իա) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իբ) Կազմակերպության հաստիքացուցակի հաստատումը.

իգ) օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

7.3.4. Կանոնադրության 7.3.3 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Կազ-

մակերպության գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ 7.3.3 կետի թ) ենթակետի, որը խորհրդի որոշմամբ կարող է փոխանցվել գործադիր տնօրենին:

7.3.5. Խորհուրդն իրավասու է (քվորում ունի), եթե ներկա են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

7.3.6. Խորհրդի որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն 2/3 մեծամասնությամբ, եթե տվյալ որոշման կայացման համար օրենքով ավելի մեծ չափ նախատեսված չէ:

7.3.7. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5 օրվա ընթացքում: Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

7.3.8. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

7.3.9. Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

բ) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

դ) նախագահում է Ընդհանուր ժողովներում:

7.3.10. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պար-տականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

7.3.11. Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Կազմակերպության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի և Կազմակերպության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով: Խորհուրդը կարող է ընդունել որոշումներ նաև հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):

7.4.Գործադիր մարմին

7.4.1. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության գործադիր մարմնի՝ գործադիր տնօրենի կողմից:

7.4.2. Գործադիր տնօրենը նշանակվում է Ընդհանուր ժողովի կողմից:

7.4.3. Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ օրենքով և Կանոնադրությամբ Ընդհանուր ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

7.4.4. Գործադիր տնօրենը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:

7.4.5. Գործադիր տնօրենը՝

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

բ) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

է) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին.

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ի) հաստատված հաստիքացուցակի համաձայն, որոշում է աշխատակիցների աշխատավարձի չափը:

7.4.6. Ընդհանուր ժողովն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել գործադիր տնօրենի հետ կնքված պայմանագրերը:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8.1.Կազմակերպության գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ:

8.2.Գործադիր տնօրենի տեղակալները նշանակվում են Խորհրդի կողմից՝ Կազմակերպության գործադիր տնօրենի ներկայացմամբ:

8.3.Կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալը (տեղակալները) պատասխանատվություն է (են) կրում գործունեության կոնկրետ ոլորտներում իրեն (իրենց) վերապահված պարտականությունների կատարման համար, ինչպես նաև իրականացնում է (են) Կազմակերպության տարածքային ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացումը:

8.4.Կազմակերպության գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

8.5.Կազմակերպության գլխավոր հաշվապահի գործառույթները սահմանվում են Կազմակերպության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ստորաբաժանման կանոնակարգով:

8.6.Կազմակերպության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, գործադիր տնօրենին կամ այլ անձի:

8.7.Կազմակերպության գլխավոր հաշվապահը նշանակվում է Խորհրդի կողմից՝ Կազմակերպության գործադիր տնօրենի ներկայացմամբ:

8.8. Կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահման-ված պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, դրանցում արժանահավատ տեղեկատվություն արտացոլելու, ինչպես նաև Կազմակերպության Ժողովին, Խորհրդին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներում Կազմակերպության մասին անկողմնակալ ֆինանսական տեղեկություններ արտացոլելու համար:

8.9. Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պար-տադիր է Կազմակերպության բոլոր աշխատողների համար:

8.10.Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ Կազմակերպության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայ-նությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ գործադիր տնօրենի կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է գործադիր տնօրենը:

8.11.Կազմակերպության գլխավոր հաշվապահը պետք է ունենա այդ պաշտոնում աշխատելու համար Կենտրոնական բանկի կողմից տրված որակավորման վկայական:

8.12.Կազմակերպության գլխավոր հաշվապահը ազատվում է աշխատանքից Խորհրդի որոշմամբ:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ)

9.1. Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ընդհանուր ժողովն ընտրում է Վերստուգող: Վերստուգողն ընտրվում է 3 տարի ժամկետով:

9.2. Վերստուգողը հետևում է Կազմակերպության կառավարման մարմինների որո-շումների կատարմանը, ստուգում է Կազմակերպության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու Կանոնադրությանը:

9.3. Վերստուգողը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Կանոնա-դրությամբ, ինչպես նաև Ընդհանուր ժողովի կողմից հաստատված՝ Վերստուգողի կանոնակարգով:

9.4. Վերստուգողը իրականացնում է Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Կազմակերպության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

9.5. Վերստուգողը հաշվետու է Ընդհանուր ժողովին:

9.6. Վերստուգողի վարձատրության և/կամ ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ

իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունն իրականացնում է օրենքով և իր կողմից սահմանած կարգով:

10.2. Կենտրոնական բանկը Կազմակերպության ստուգումներն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով, դեպքերում և կարգով:

10.3. Կենտրոնական բանկն իրականացնում է նաև Կազմակերպության գործունեության ամենօրյա հեռակա վերահսկողություն՝ Կազմակերպության կողմից օրենքով, Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով և դրանց հիման վրա Կենտրոնական բանկի խորհրդի, նախագահի կամ վերստուգող ստորաբաժանման կողմից պահանջվող՝ Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների, տեղեկանքների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ փաստաթղթերի կամ տեղեկությունների ստուգման միջոցով:

11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

11.1.Յուրաքանչյուր տարի Կազմակերպության գործունեությունն ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից, որին նշանակում է Կազմակերպության Ընդհանուր ժողովը:

11.2.Անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը Կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում:

12. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. Կազմակերպության գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

12.2. Կազմակերպության գործունեության արդյունքներն արտացոլվում են Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում՝ վերջինիս կողմից սահմանված պարբերականությամբ, ձևերով և կարգով:

12.3. Կազմակերպությունը հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացնում է հաշվապահական հաշվառման մասին օրենսդրությամբ նախատեսված կանոններին և սկզբունքներին համապատասխան:

12.4. Կազմակերպությունը կազմում և հրապարակում է տարեկան, եռամսյակային և այլ ֆինանսական հաշվետվություններ՝ Կենտրոնական բանկի և Կառավարության լիազորված մարմնի կողմից համաձայնեցված կարգով:

12.5. Կազմակերպությունը ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը:

12.6. Կազմակերպությունը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հրապարակում է իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

12.7. Կազմակերպությունը պարբերաբար հրապարակում է իր գործունեության վերաբերյալ տեղեկություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և հաճախականությամբ:

12.8. Հաշվապահական հաշվառման աշխատանքների ծավալից կախված՝

Կազմակերպության հաշվապահական հաշվառումը օրենքով սահմանված կարգով կարող է վարվել հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից:

13. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

13.1. Կազմակերպության գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

13.2. Կազմակերպությունը կարող է լուծարվել նրա լիցենզիան անվավեր ճանաչելու, ուժը կորցրած ճանաչելու, «Բանկերի և վարկային վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, Կազմակերպության Ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ հիմքերով:

13.3. Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Կազմակերպության լուծարման մասին, եթե Կազմակերպությունն ի վիճակի է բավարարելու իր պարտատերերի պահանջները:

Հավելված 1

«ԴԻՋԻՍԵՅՖ» Վարկային Միություն
Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հիմնադիրների (մասնակիցների) ցուցակ՝ համապատասխան բաժնեմասերով

N	Անուն Ազգանուն (անձնագրի տվյալներ)	Բաժնեմասի չափը (%)
1.	Հրաչյա Թոխմախյան AS0229328 տրված՝ 13.06.18թ. 013–ի կողմից, հծհ՝ 3003730100	26,5%
	Էմիլ Վասիլյան 010457885 տրված՝ 31.07.19թ. 010-ի կողմից, հծհ 2901730108	24,4%
2.	Վարդան Գևորգյան AR0384095 տրված՝ 20.07.17թ. 001-ի կողմից, հծհ՝ 3810720275	13,3%
3.	Հակոբ Ղոնջեյան 000659615 տրված՝ 10.01.14թ. 004-ի կողմից, հծհ՝ 1101830409	12,7%
4.	Աննա Կարապետյան 010910974 տրված՝ 20.06.19թ. 007-ի կողմից, հծհ՝ 7511770061	9,5%
5.	Տիգրան Հունանյան AM0657185 տրված՝ 01.03.12թ. 010-ի կողմից, հծհ՝ 3114850154	7,2%
	Լիլիթ Արաբաչյան 010371813 տրված՝ 15.03.19թ. 013-ի կողմից, հծհ՝ 6702770146	5%
	Տիգրան Սահակյան 005080015 տրված՝ 26.05.14թ. 008-ի կողմից, հծհ՝ 1609740165	1,4%